ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.10.2018թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ն. Վարդանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ, Վ.Մկրտչյանը, Լ. Հովհաննիսյանը, Մ. Անտոնյանը, Է. Արշակյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.«Գազկոմշին» ՍՊԸ (ՀՀ ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ,20/53)
2. «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ ք. Երևան, Հաղթանակ 14 փ.2)
3. «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ ք. Երևան, Նուբարաշեն, 3-րդ փող. 27 տուն)
4.«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ((ՀՀ ք. Երևան, նուբարաշեն 11փ. 21/26)
5.«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,Ազատության 2)
6.«Վահրադյան Շին» ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ,ք. Ստեփանավան, Չարենցի 175)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/					
				«Գազկոմշին» ՍՊԸ	«ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ*	«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ	«Գևորգյան և Ներսիսյան»ՍՊԸ	«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ	«Վահրադյան Շին» ՍՊԸ

1	ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության շենքի վերանորոգման աշխատանքներ	1	15156870	8750000	9700000	10980000	11797500	11500000	11997500

*** Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Գազկոմշին» ՍՊԸ**-ին:
1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ**-ին:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ն. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ. Հովհաննիսյան

_____ Ա. Թումանյան

_____ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան